ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 73-Լ

«06» 09 2024թ. ք. Երևան

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 50.1-ին հոդվածը, 2024 թվականի ապրիլի 11-ի՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-163-Ն ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հաստատել բարեվարքության վերաբերյալ առաջին ընթացիկ ուսումնասիրություն անցնող դատախազների ցանկը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Բարեվարքության վերաբերյալ առաջին ընթացիկ ուսումնասիրություն անցնող դատախազների ցանկում ընդգրկված դատախազներին՝ բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության լրացված հարցաթերթիկը մինչև 2024 թվականի սեպտեմբերի

20-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության դատախազության անձնակազմի կառավարման վարչություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**